ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
Բալահովիտ գյուղական համայնքի հաշվետու
Համայնքային ժողովի

07.07.2011թ գ.Բալահովիտ

2011թվականի հուլիսի 7-ին տեղի է ունեցել Բալահովիտ համայնքի հաշվետու համայնքային ժողովը:

Մասնակցությամբ՝

Համայնքի ավագանու անդամներ՝

1. Գրիգորյան Կորյուն
2. Վիրաբյան Կորյուն
3. Հովհաննիսյան Վալերիկ
4. Մանուկյան Արմեն
5. Պետրոսյան Վահրամ
6. Ներսիսյան Հուսիկ
7. Հունանյան Էդիկ
8. Ավետիսյան Վրեժ
9. Մանուկյան Պավլիկ
10. Բարեղամյան Համլետ
11. Մկրտչյան Սամվել

Համայնքի ղեկավարի աշխատակազմից՝

1. Անդրանիկ Պետրոսյան
2. Վարդան Հարությունյան
3. Սվետլանա Դավթյան
4. Ռադիկ Մանուկյան
5. Անուշավան Դավթյան
6. Տալիտա Գաբրիելյան
7. Ռուզաննա Գալստյան

Համայնքի բնակիչներ

ՕՐԱԿԱՐԳ

1. Համայնքի ավագանու և համայնքի ղեկավարի կողմից կատարված աշխատանքների հանրային իրազեկման մասին:
2. Ընթացիկ հարցեր
3. Ելույթներ

Համայնքի ղեկավար՝ Կ.Գրիգորյան

Հարգելի համագյուղացիներ Բալահովիտ համայնքը տեղակայված է Կոտայքի մարզի հարավ-արևելյան մասում, հեռավորությունը Երևանից 15կմ, մարզկենտրոնից 30 կմ:
Համայնքն ունի 1184 տնտեսություն, 3853 բնակիչ: Համայնքի վարչական տարածքը 510.49հա:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով, համայնքի ղեկավարի համար սահմանված պարտադիր, կամավոր և պետության կողմից պատվիրակված լիազորությունների շրջանակներում Ձեզ է ներկայացվում համայնքի

ղեկավարի և աշխատակազմի կողմից իրականացված աշխատանքների հաշվետվություն:
Հաշվետու ժամանակահատվածում համայնքի ղեկավարի կողմից կայացվել է 364 որոշումներ և 105 կարգադրություններ, ավագանու կողմից կայացվել է 71 որոշում:
Սահմանված է քաղաքացիների ընդունելության օրեր:

- Ֆիննանսական բնագավառ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով, սահմանված կարգով կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2010թ-ի բյուջեն, որի եկամուտները կազմել են 55874.3 հազ.դրամ:
2010թ-ին համայնքի ֆոնդային բյուջեի մուտքերը կազմել են 10000.0 հազ.դրամ, սակայն հավաքագրվել է 84361.5հազ.դրամ, որը ուղղվել է համայնքի փողոցների ասֆալտապատման, գազաֆիկացման, քարտեզագրման, հուշարձանների վերանորոգման և փողոցների լուսավորություն անցկացնելու համար, իսկ մնացածը՝ 39918.2 հազ.դրամը մնացել է որպես տարվա մնացորդ նոր մանկապարտեզ կառուցելու համար:
Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով, սահմանված կարգով կազմվել և համայնքի ավագանու հաստատմանն է ներկայացվել համայնքի 2011թ-ի բյուջեն, որի եկամուտները կազմել են 55622.5հազ.դրամ:
2011թ-ին համայնքի ֆոնդային բյուջեի մուտքը հաստատվել է 49918.2 հազ.դրամ, որից 10000.0 հազ.դրամը հողի օտարումից մուտքեր, իսկ 39918.2հազ. դրամը տարվա սկզբի մնացորդ: 2011թ-ի հուլիսի 1-ի դրությամբ հավաքագրվել է հողի օտարումից եկամուտներ 8464.4 հազ.դրամ, որը ուղղվել է համայնքի փողոցների լուսավորություն, դպրոցի գազի նախագծային աշխատանքներ, գերեզմանատան քարտեզագրման, ջրագծի վերանորոգում անցկացնելու համար;

- Հողօգտագործման բնագավառ

Հետևողականություն է ցուցաբերվում հողերի նպատակային օգտագործմանը, հողերի հաշվառմանը, վարվում է հերթապահ քարտեզ, կազմվում է հողային հաշվեկշիռը:

- Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ

Համայնքը օժանդակում է սոցիալական օգնության ծառայության գործունեությունը:
2010թ-ին համայնքը սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել է 3735.0 հազ. դրամ դրամական օգնություն:
Մայիսի 9-ի կապակցությամբ Հայրենական Մեծ Պատերազմի մասնակիցներին 600.0հազ.դրամ, Համահայկական հիմնադրամին 50.0 հազ. դրամ, երաժշտական դպրոց հաճախող երեխաներին 107.0 հազ. դրամ, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներին, որպես ուսման վարձ 1060.0 հազ.դրամ:
Նոր ուսումնական տարվա սեպտեմբերի 1-ի կապակցությամբ 1-ին դասարան հաճախող և անապահով ընտանիքներին 496.0 հազ. դրամ գրենական պիտույքների համար:
2011թ-ին համայնքը սոցիալապես անապահով ընտանիքներին տրամադրել է 1960.0 հազ. դրամ դրամական օգնություն:
Համահայկական հիմնադրամին 200.0 հազ. դրամ, երաժշտական դպրոց հաճախող երեխաներին 58.5 հազ. դրամ, բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողներին, որպես ուսման վարձ 610.0 հազ.դրամ:

- Կրթություն, մշակույթի և երիտասարդության հետ տարվող աշխատանքների բնագավառ

Համայնքը ունի դպրոց 340 աշակերտական տեղով: Համայնքում գործում են պարի և կարատեի խմբակներ, խմբակները բազմիցս մասնակցել են մրցաշարերի և գրավել պատվավոր տեղեր, արժանացել են գովասանքների և պարգևների: Համայնքը ունի գրադարան 6781 կտոր գրքով:

- Բնության և շրջակա միջավայրի պահպանության բնագավառ

Համայնքում իրականացվում է աղբահանության աշխատանքներ, որի վրա համայնքի բյուջեից 2010թ-ին ծախսվել է 235.0 հազ. դրամ, 2011թ-ի 1-ին կիսամյակում՝ 246.0 հազ.դրամ: Համայնքում իրականացվում է փողոցների լուսավորման համակարգի սպասարկում, որի արդյունքում լուսավորման համակարգերը միշտ գտնվում են սարքին վիճակում, փողոցները գիշերային ժամերին լուսավորվում են:

- Առևտրի և սպասարկման բնագավառ

Առևտրի և սպասարկման բնագավառում համայնքի ղեկավարի պարտադիր լիազորությունների իրականացման նպատակով մշակվել և համայնքի ավագանու կողից հաստատվել է առևտրի, հասարակական սննդի և սպասարկման ոլորտի գործունեության համայնքային կանոնները:
Հաշվետու ժամանակահատվածում գործել են 16 առևտրի կետեր, 4 հանրային սննդի օբյեկտներ, տրվել է ոգելից խմիչքների և ծխախոտի վաճառքի թույլտվություն, որի արդյունքում համայնքի բյուջե 2010թ-ին մուտքագրվել է 732.6 հազ. դրամ տեղական տուրք, իսկ 2011թ-ի 1-ին կիսամյակում 1131.5հազ.դրամ:

- Գյուղատնտեսության բնագավառ

Համայնքը չի համարվում զարգացած գյուղատնտեսությամբ համայնք, քանի որ գյուղ-նշանակության հողատեսքեր շատ քիչ են: Երկար տարիների շահագործումից ոռոգման համակարգերը այլևս պիտանի չեն: Անհրաժեշտ են մեծ կապիտալ ներդրումներ համակարգերի կապիտալ վերանորոգման և նոր ջրատարների կառուցման նպատակով:

- Առողջապահություն

Համայնքում գործում է Բժշկական ամբուլատորիան, որն իրականացնում է համայնքի բնակչության ընթացիկ բուժ.սպասարկումը, հղիների, նորածինների հաշվառումը: Ամբուլատորիան ապահոված է բուժ.մասնագետներով:

- Ելույթներ և առաջարկություններ

Համայնքի բնակիչներ
Ելույթ ունեցողները առաջարկեցին մանկապարտեզի նոր շենքի կառուցում

Համայնքի ղեկավար՝ Կ.Գրիգորյան

Արձանագրող՝ Ա.Պետրոսյան